<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԳԵՏԵՐԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ (ՈՒՌԵՆՈՒ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՔ ԵՎ ՏՆԿՈՒՄ)

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում»՝ ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրի շրջանակներում

Առաջարկվում է ժամանակավոր վճարովի աշխատանք (ուռենիների կտրոնների հավաք և տնկում) **Գեղարքունիքի մարզի** Մաքենիս, Ախպրաձոր, Մարտունի, Գեղհովիտ, Մադինա, Լեռնակերտ, Վարդենիկ, Ծովինար, Գանձակ, Լանջաղբյուր, Ծաղկաշեն, Գեղարքունիք, Սարուխան, քաղաք Գավառ, Մեծ Մասրիկ, Գեղամասար համայնք, քաղաք Վարդենիս համայնքների չափահաս բնակիչներին, ովքեր մեծապես տուժել են համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից: Աշխատանքներն համակարգում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, և ԳՄՀԸ-ն: Ծրագրին աջակցող տեղական գործընկերներն են «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» և «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպությունները:

<u>ԿԱՆԱՆՑ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ ՈՂՋՈՒՆԵԼԻ Է:</u>

Աշխատանքների իրականացման ժամկետը **ապրիլի 15-ից մայիսի 15-ն** ընկած ժամանակահատվածն է, որի ընթացքում նախատեսվում է ներգրավել 300-ից 350 մասնակից՝ օրական 8-ժամ աշխատանքային գրաֆիկով:

Աշխատանքներին ներգրավելու հիմքը ***քաղաքացիա-իրավական պայմանագիրն*** է, իսկ վճարումը կատարվելու է միայն ***բանկային փոխանցումով:***

Մեկ ուռենու շիվ կտրելու և տնկելու համար **վճարելու ենք** ***60 (վաթսուն) ՀՀ դրամ (ներառյալ հարկային և այլ վճարային պարտավորությունները):*** Աշխատանքները ներառում են նաև ուռենու կտրոնները կտրելու, բերելու և տունկին նախապատրաստելու գործընթացները:

Առանց հարկային և այլ վճարային պարտավորությունների զուտ վարձատրության չափը մեկ ուռենու շիվ կտրելու և տնկելու համար կկազմի 45 ՀՀ դրամ, իսկ 1974 թվականից հետո ծնված քաղաքացիների համար՝ 43 ՀՀ դրամ:

Տնկվելու են նաև մոտ **12,000** մրգատու ծառերի (տանձենի և խնձորենի) տնկիներ, որոնց համար վճարում նախատեսված չէ:

Մասնակիցների համար մինչ աշխատանքները սկսելը կկազմակերպվեն կրթական և իրազեկման մոտ 40-րոպեանոց բացօթյա քննարկումներ, որոնց ընթացքում կներկայացվեն աշխատանքային ուղեցույցն ու հիմնական կանոնները, ինչպես նաև կտրամադրվեն բանվորական ձեռնոցներ, էտի մկրատներ և ռետինե կոշիկներ:

Աշխատանքների յուրաքանչյուր մասնակից պետք է իր հետ ունենա ջուր և սնունդ. կազմակերպիչների կողմից նախատեսված չէ տրամադրել ջուր և սնունդ ինչպես նաև համապատասխան հագուստ դաշտային պայմաններում աշխատելու համար:

Յուրաքանչյուր համայնքում ուռենու կտրոնների կտրման և ծառերի տնկման աշխատանքների իրականացմանը կաջակցեն ծրագրի իրականացման թիմը, համայնքային իշխանությունների, ավագանու ներկայացուցիչները:

<u>ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ապրիլի 5-ն է /հայտի ձևը կցվում է/</u>

Եթե հետաքրքրված եք ծրագրով, ապա կարող եք ներկայանալ ձեր համայնքապետարան, գրանցվել՝ տրամադրելով անձնագրային և սոց քարտի տվյալներ, հասցե, հեռախոսի համար և էլ. հասցե կամ **լրացնել առցանց հայտը** https://bit.ly/2O6WdUQ:

Հարցերի դեպքում կարող եք նամակ ուղարկել info@blejan.org էլեկտրոնային հասցեին, իսկ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել «Բլեջան» ՀԿ-ի գրասենյակ՝ հետևյալ հեռախոսահամարով. 077 764641:

Հայտը բավարարելու դեպքում, 15 օրվա ընթացքում, դիմողը կստանա տեղեկատվություն՝ աշխատանքների իրականացման պայմանագրի կնքման ամսաթվի, ժամի, վայրի վերաբերյալ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում» ծրագրի նպատակն է **աջակցել ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանը ուղղված ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը** և ապահովել դրա շարունակելիությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում: **Ծրագիրը կտրամադրի ժամանակավոր աշխատանք և աշխատանքի դիմաց եկամուտ այն մարդկանց, ովքեր մեծապես տուժել են համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից՝ միաժամանակ լուծելով բնապահպանական խնդիրներ:**

Գետերի ափամերձ տարածքների վերականգնման նպատակով ծրագիրը կներառի ուռենիների և այլ տեղական տեսակների տնկում Գեղարքունիքի մարզի Սևանա լիճ հոսող նախանշված գետերի ափամերձ տարածքներում, ինչպես նաև աղբահավաք գետաբերաններում և գետերի առափնյա հատվածներում: Ծրագիրը դրական ազդեցություն կունենա կենսաբազմազանության, լանջերի պաշտպանության և ջրի որակի վրա: